

Ասիկա ինքնին ցոյց կուտայ, որ հայերը կը շարունակէին իրենց առեւտուրը:

Հանուէյ, Անգլիայէն մեկնելէն առաջ, խօսակցութիւն մը կ'ունենայ Richard Lockwood-ի հետ, որ մեծապէս կարեւոր է մեզի համար: «Որոշ է, որ Թուրքիոյ Ընկերութեան տարիներու փորձառութիւնը պատճառ եղաւ, որ անոնք երբեք Պարսկաստանի հիւսիսային գաւառներուն մէջ ներկայացուցչութիւն չհաստատեցին: Անոնք աւելի խելացի սեպե-

ռականներէն աւելի աժան ձեռք կը բերէին: Անոնք կամ ապառիկ եւ կամ ուրիշ ապրանքներու հետ փոխանակութեամբ կը ստանային: 1741-ին առաջնակարգ մետաքսին 13 փառնտ ծանրութեան 12.50 տոլար էր գինը, երկրորդ կարգին՝ 10 տոլար եւ երրորդ կարգին՝ 8.50 տոլար»: (էջ 416-17)

1745-ին Thomas Osborn կը վկայէ. «Թուրքիայէն (Անգլիա) ներածուած ապրանքներ են հում մետաքս Պարսկաստանի, այծի մազ (հաւանարար Անկիւրիոյ) ... գորգ ... Թուրքիայէն ծովով կատարուած առեւտուրը կը բաղկանայ շատ մեծ քանակութեամբ ճոխ ապրանքներէ, որոնք օրական հոն (Թուրքիա) կը տարուին Պարսկաստանէն, Արաբիայէն եւ Թաթարաց երկրէն, ուղտի եւ ջորիներու կարաւաններով: Սակայն, այս եւ ուրիշ առեւտուրները գլխաւորաբար կը կառավարուին հայ քրիստոնեաներէ կամ հրեաներէ»: (A Collection of Voyages and Travels.—London, 1745, Vol. I, էջ 509):

Սակայն, հրեաները միայն ԺԼ. դարուն հրապարակ իջան եւ գրեթէ ոչինչ կոտորակ մը կը կազմէին բաղադրամբ հայոց:

ցին այս վտանգին չենթարկուիլ՝ նման հաստատութիւններէ ծաղկելիք շահը հայերուն զիջելով: Հայերը Պարսկական մետաքսը կը բերէին Զմիւռնիա եւ Հալէպ, ինչպէս որ ուսերը եւ հայերը ատոր մեծ մասը կը բերեն Ս. Բեաբրուրդ: Սակայն, Թուրքիոյ ընկերութիւնը երբեք չունեցաւ Ռուսիոյ վաճառականներուն ունեցած փորձութիւնը: Անոնք (Թուրքիոյ ընկերութիւնը) Թուրքերուն հետ չզաշնակցեցան դէպի Պարսկաստան ապահով ճանապարհ ստանալու համար, ոչ ալ իշխաններէն հրաւիրուեցան առեւտուրի մասնակցելու համար: Ասկէ զատ, իրենց մասնաւոր օրէնքները իրենց կ'արգիլեն ունենալ ներկայացուցիչներ, որոնք ընկերութեան հաշուոյն Պարսկաստանէն ապրանք կը ղրկեն»:1)

Թուրքիոյ ընկերութիւնը, խոհեմութեամբ այս ճամբուն հետեւելով, վայելեց հայ վաճառականներու գործակցութիւնը, — բան մը նուիրականացած էր նոյնիսկ Ընկերութեան հիմնարկութեան օրերէն: Հայերը կը հայթայթէին նոյնիսկ Ռէշտի հում մետաքսը այս ընկերութեան»: Ռէշտ, Գիւրանի գլխաւոր քաղաքը (1743-էն) քսան տարի առաջ չըջապատուած էր խիտ ծառաստանով մը, որ զայն կ'ընէր ծայրայեղ կերպով անվստահելի, այն ատիճան, որ մետաքս գնելու համար Թուրքիայէն եկող հայերը, սովորաբար (Ռէշտէն) օրուան մը ճանապարհ հեռու կ'օթեւանէին, եւ իրենց ծառաները քաղաք կը ղրկէին»:2)

1) Անդ՝ էջ 190:

2) Անդ՝ էջ XIV: